ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) կատարել հետեյալ փոփոխությունները.

1. Օրենսգրքի 170.7-րդ հոդվածը շարադրել հետեյալ խմբագրությամբ՝

«Հոդված 170.7. Ակցիզային դրոշմանիշների եւ (կամ) հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը

Սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշները եւ (կամ) հսկիչ նշանները (դրոշմապիտակները) օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում հիսուն հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի եւ (կամ) հսկիչ նշանի (դրոշմապիտակի) համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով:

Նույն արարքը, եթե օտարված դրոշմանիշների եւ (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) քանակը կազմում է հիսունից մինչեւ հազար հատ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի եւ (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»:

2. Օրենսգրքի 170. 8-րդ հոդվածը շարադրել հետեյալ խմբագրությամբ՝

«Հոդված 170.8. Ակցիզային դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը

Ակցիզային դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված

(իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»:
3. Օրենսգրքի 170. 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«Հոդված 170.9. Ակցիզային դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելը
Ակցիզային դրոշմանիշերի եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձեւով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված, ինչպես նաեւ որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:»:
4. Օրենսգրքի 170. 12-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«Հոդված 170.12. Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած՝ իրացման համար թույլատրելի ժամկետներից հետո որոշակի թվագրումով դրոշմանիշներով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացումը
Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որոշակի թվագրումով դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետներից հետո այդպիսի ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հարյուր հազար դրամը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:
Նույն արարքը, որը կրկնվում է վարչական տուգանք նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է հարյուր հազար դրամը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչեւ հինգհարյուրապատիկի չափով»:
ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից: